

ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՀՈՒՈՎՆԵՐԸ

Սեռական եւ սրական նշաններ

Մնաց մեզ մի խնդիր ևս որոշել, թէ արդեօք մեր 2-րդ օլովը իւր ստուգաբանութեամբ, այսինքն ձևի (և ոչ իմաստի) ծագումով սեռական է, թէ տրական:

Հոլով որոշելու համար երկու հայեցակէտ կարելի է ունենալ. մէկ՝ լեզուի մեր այժմեան հայեցակէտը, մէկ էլ՝ պատմական: Այս երկրորդը վերաբերում է գլխաւորապէս պատմական քերականութեանը և կարեւոր է ձևերի ծագումը բացատրելու համար: Առաջին հայեցակէտով հոլովական ձևն առնուով է այնպէս, ինչպէս ըմբռնուով է կենդանի լեզուի մէջ: Օրինակ՝ Ո՞ւմ գիրքը կապուկցութեան ում ձևը մեր այժմեան հայեցակէտով սեռական է, բայց դա ստուգաբանօրէն տրական է, որ ապա ստացել է և սեռականի նշանակութիւն: Նոյնպէս պաա—պահա բառը ստուգաբանօրէն հայցական է, բայց այժմ ունի և ուղղականի նշանակութիւն: Մի ձև իւր պատմական ծագումով կարող է ուրեմն համապատասխան չլինել այն գործածութեանը, որ ունի կենդանի լեզուի մէջ: Մի ոչ պատմական քերականութեան համար բաւական է մեր այժմեան հայեցակէտը սեռական-տրականը մի ընդհանուր հոլով համարելու, քանի որ դրանք մի հոլով են ձևով և մասամբ մեր արդի ըմբռնումով: Բայց որովհետեւ կարող են լինել, որ մեր 2-րդ հոլովական ձևի ծագումին նշանակութիւն տան, ուստի այժմ տեսնենք թէ արդեօք մեր սեռական-տրական հոլովը կարելի է մի ընդհանուր հոլով դնել առանց այդ ձևի ծագմանը հակասելու. ուրիշ խօսքով՝ ի՞նչ է ստուգաբանօրէն մեր 2-րդ հոլովը, սեռական, տրական, թէ՞ մի ընդհանուր ձև:

Աշխարհաբարի սեռական-տրական հոլովը կազմուով է երկու կերպ, վերջաւորութիւններով և առանց վերջաւորութեան:

Վերջաւորութիւններով կազմուով են՝ հաց, հաց-ի. մարդ, մարդ-ու, դուռ, դռ-ան. օր, օր-ւան. կին, կն-ոջ, մերձնք, մերձն-ց. այլ և բարբառային ձևով՝ Երեւան, Երեւան-այ Երեւան-ա. Էջմիածին, Էջմիածն-այ Էջմիածն-ա:—ի, ու, ան, լան, ոջ, ց,

ա(յ) վերջերն այժմ բմբռնում ենք իբրև հոլովակերտ վերջաւորութիւն սեռական-տրականի: Ի՞նչ ծագում ունին զրանք, նախ՝ ի, ու, ան, ւան վերջաւորութիւնները, որ ամենից կարեւոր տեղն են բռնում, — որովհետեւ միւս վերջաւորութիւններով և առանց վերջաւորութեան հոլովուող բառերը սակաւաթիւ են: — Այս հասկանալու համար պէտք է տեսնել նախ զրաբարի հոլովման կազմութիւնն ու դրութիւնը:

Գրաբարում շեշտը մեծ մասամբ բառերի վերջին վանկի վրայ է. նախադրաբարեան շրջանում սակայն բառերը շեշտուել են վերջնից վանկի վրայ: Շեշտի այս դրութեան պատճառով բառերի վերջի ձայնաւորները թոյլ արտասանուելով ողուել են՝ դառնալով նախ ր և ապա դուրս ընկնելով ուստի սկզբնական քմնո, ամա, բանի, զարդու ձևերը քունք, ամը, բանը, զարդը ձևերից անցնելով դարձել են քուն, ամ, բան, զարդ: Իսկ ն, ր, ղ հնչիւններով վերջացած բառերի վերջի այս հնչիւնները մնացել են, միայն զրանցից առաջ եղած ձայնաւորը ողուել է. * անտեղ դարձել է անտըղ, ասաղ. * գեղման դարձել է գեղմըն, գեղմն. ապա այս կարգի բառերի վերջի ն բազմաթիւն ևս ընկել է և մնացել ր, ինչպէս բարբառներն մէջ եղը, դառը, մուկը, մինչև որ վերջապէս այս վերջի ր ձայնաւորն ևս դուրս է ընկնում և այժմ ունինք՝ գառ, մուկ, եղ ևրն:

Շեշտի այս աղբյուրութեամբ ուրեմն բառերի վերջի հընչիւնները դուրս են ընկել և սրանով է բացատրւում, որ եզակի ուղղական, կոչական և հայցական հոլովները, որ սկզբնապէս տարբեր ձևեր են ունեցել, մի ընդհանուր ձև են ստացել զրաբարում (Մէյէի Քեր. եր. 45): Այդ հոլովները մնացել են առանց որ և է հոլովական վերջաւորութեան և առանց ընի՝ վերջի ձայնաւորի, որոնք դուրս են ընկել. մի և նոյն ամ, քուն ձևը, տարբեր ծագումից առաջ եկած, դործ է ածւում և երեք հոլովի իմաստով: Այդ երեք հոլովից սակայն, զրաբարում միայն «կոչականը չունի իրեն յատուկ գոյութիւնը», այսինքն զառ հոլով չի համարւում, որովհետեւ յոգնակիւում ևս ձևով նոյն է ուղղականի հետ. իսկ հայցականը դեռ առանձին հոլով է, որովհետեւ յոգնակիւում պահել է իւր վերջաւորութիւնը՝ ս հնչիւնը, ամա, քունս, սիրտս, զարդս, որ ըստ Մէյէի (Քեր. եր. 46) հնդեւրոպական ծագում ունի:

Այսպէս տեսնում ենք՝ զրաբարի հոլովումը ուղղականի և հայցականի նկատմամբ չունի մի հաւասարակշիւ դրութիւն:

եղակիւն և յոգնակիւն համեմատ չեն՝ եղակիւում՝ ուղղական և հայցական նման են (հայցականի զ և միւս նախդիրները հաշտական մաս չեն), իսկ յոգնակիւում տարբեր իսկ այսպիսի դրութիւնը չի կարող կայուն լինել, որովհետեւ հաշտական շփոթութիւն է առաջ բերում, որտեղ և առաջ են գալիս նմանական (անալոգիական) կազմութիւններ։ Պաշտօնով տարբեր ձեւերի՝ հնչափոխութեամբ առաջացած հնչիւնական դուռ դադիսութեան (Zusammenfall) հետևանքներից մէկն այն է, որ մարդ այնքան վարժոււմ է հնչիւնական նոյնութեան, որ այդ հնչիւնական նոյնութիւնն անց է կացնում և այնպիսի դէպքերի վրայ, որոնց մէջ հնչափոխութեամբ դեռ նոյնութիւն առաջ չի եկել։¹ Այսպէս դերմաներէնի անունների ուղղականն ու հայցականը մեծ մասամբ նոյնացել են, որովհետեւ որոշ բառերի մէջ եղակի կամ յոգնակի ուղղականն և հայցականը հնչափոխութեամբ նոյն ձեւն են առացել՝ ապա դրանց հետեւ են նմանական կազմութեամբ և միւսները։ Այս նոյնացումը յաճախ ի հարկէ հենց սկզբից որոշ ուղղութեամբ չի կատարուում՝ նախ երկու ձեւն էլ, ուղղականի և հայցականի ձեւը, խառն, մէկը միւսի տեղ (promiscue), դարձ են ածուում մինչև մի ձեւը հաստատուում է։²

Գրաբարում արդէն տեսնում ենք, որ քանի որ եղակի ուղղական և հայցական հաշտները ձեւով նոյնացել են, դրանց նմանութեամբ յոգնակի ուղղականն և հայցականն էլ ձգտում են ձեւական տարբերութիւնը վերացնելու։ Այսպէս պատահում են եւսլ գործածութիւններ լրբե հայցական և քնդհակառակն ևսլ գործածութիւններ լրբե ուղղական, զհաւատացեալքս ի Քրիստոս, ոչ գոյր ընդ նոսա ասանաժա օտարս, եղև հարոանիս և շատ նմանները (տե՛ս Քաղբաաս, եր, 45) աղատահական սխալներ չեն։ Ահաւոր ձգտելով յոգն, ուղղականի և

1. Թեմ (thème) ասում է քերականութեան մէջ բառերի սկզբնական, անփոփոխ մասը՝ փակ վերջաւորութիւնը (desinence)՝ բառերի վերջի փոփոխական մասն է, որ աւելանում է քնի վրայ՝ թիւ, հոլով, գէմք, ժամանակ եւլն, ցոյց տալու համար, Հոլովները զանազանում են իրարուց վերջաւորութեան տարբերութեամբ, ինչպէս՝ հաց-ի, հաց—ից հաց-ով, հոլովումներն եւս տարբերում են վերջաւորութեամբ, ինչպէս մի բառ լինում է նոյն ձեւը հաց-ի, մի ուրիշը՝ մարդ-ու։

1. H. Paul, Principien der Sprachgeschichte, Halle, zweite Auflage, եր. 490.

2. Նոյն 191 հտ.

հայցականի մէջ ևս ձևական նոյնութիւն առաջ բերելու, սիրգ-
բում դեռ աստանուում է երկու ձևերի մէջ ընտրութիւն ա-
նելու, մինչև որ վերջապէս հայցականի ձևը յետ է մղուում և
լեզուից դուրս է ձգուում թողնելով միայն հետքեր, ինչպէս՝
պաս, երկուս, մի քանիսը, ծախս (բարբառներում և ուրիշ-
ները՝ ինչպէս խարսնիս=հարսանիս, բալնիս=բանալիս ևլն),
որոնց մէջ հայցականի ձևն այլ ևս իբրև հայցական չի ըմբռնուում
և գործ է ածուում նաև իբրև ուղղական: Ուղղականի ձևն ընդ-
հակառակն հետզհետէ գործ է ածուում և իբրև հայցական, մինչև
որ վերջապէս այդ ձևն իշխող է դառնում, որով հին հայցա-
կան հոլովն ըստ ձևի դուրս է ընկնում և մնում միայն ուղղա-
կան հոլովը: Հետևանքն այն է լինում, որ աշխարհաբարում
հայցական հոլովն ևս ըստ ձևի չկայ, մինչդեռ գրաբարում
միայն կոչականը չկար:

Յոգնակի ուղղականի և հայցականի ձևերի այս հաւատա-
բեցման մէջ սակայն լեզուն առաջ է մղուում և հաւաքական
յոգնակի ետք—եթ մասնիկը, որ մի ընդհանուր ձև էր ուղղա-
կանի և հայցականի համար, ուստի և աւելի հեշտութեամբ
ընդհանրանում է նոր լեզուի մէջ յոգնակի թիւ կազմելու հա-
մար (հմմ.Մէյէ, Քեր. եր. 59 հտ.): Այս մասնիկի առաջ յոգնա-
կանի հին Բ-ն յետ է մղուում՝ մնալով միայն դերանունների և
ձայնաւորով, յատկապէս ի ձայնաւորով վերջացած անունների
համար՝ որդիք, այգիք, եկեղեցիք ևլն, որոնք արդէն գրեթէ
հնարած ձևեր են, մէկ էլ՝ անեզական կամ իբրև անեզական
գործածուած բառերի մէջ: Այս վերջին դէպքում էլ սակայն
Բ-ն կորցրել է արդէն իւր թուական նշանակութիւնը և դար-
ձել մի ոտակ վերջածանց մասնիկ, որ ոչ թէ հոլովման է վերա-
բերում, այլ բառակազմութեան. կառք, աչք, գիրք, փառք,
տանջանք ևլն աշխարհաբարում այլ ևս յոգնակի իմաստ չունին:

Ուղղական և հայցական հոլովների այս ձևական նոյնա-
ցումը մի անյարմարութիւն է առաջ բերում. Որովհետև հա-
յերէնում որոշ հաստատուն բառադասութիւն չկայ, խօսքը
յաճախ երկդիմի է մնում. Տիգրանը տեսաւ Վարդանը,—չի
հասկացում ենթական և սեռի խնդիրը: Այս երկդիմութեան
առաջն առնելու համար արեւելեան բարբառները հայցականի
իմաստով մարդոց անունների համար, երբ որոշ են, սկսել են
գործածել արական հոլովը: Այս փոխանակութիւնն անշուշտ
սկսուել է դերանուններից և գրաբարում արդէն տեսնում ենք
գրա սկիզբն անձնական դերանունների մէջ՝ դ-մեղ, գ-քեղ,
գ-ձեղ. որոնց նմանութեամբ ասուել են և ինձ, օրան, դրան,

նրան և ընդ և ապա անձի անունները, երբ որոշ են: Բայց մի անգամ որ տրականն անցել է հայցականի տեղ, գրա հետևանքն այն է լինում, որ նմանութեամբ որոշ անձի անուններից այս կերպութիւնն անցել է մասամբ և անորոշ անձի և կենդանիների անունների վրայ և այժմ անցնում է նոյն իսկ անշունչ առարկաների անունների վրայ: Վերջին գործածութիւնը, որ պատահում է աւելի խօսակցութեան մէջ, սխալ է համարուում. բայց դա լեզուի բնական ձգտումից է առաջանում, — այն է՝ հայցական հոլովի իմաստի գործածութիւնը միակերպութեան վերածելը ըստ ձևի և ոչ թէ մի և նոյն բառի համար մի դէպքում ուղղականը գործածել իբրև հայցական, ուրիշ դէպքում՝ տրականը:

Անցնենք միւս հոլովներին: Այս հոլովների թեքման հիմքը գրաբարում կազմում է այն, որ շեշտն անցնելով մի վանկ ետև՝ վերականգնում է բառի բունը, որի վրայ աւելանում են վերջաւորութիւնները: Այսպէս օրինակ՝ գործիականի լ, վ—ւի(ն), լի(ն) վերջաւորութիւնը, որ հնդեւրոպական ծագում ունի, աւելանալով անունների բներին՝ կազմում է՝ մարդո՛ւվ, ամա՛ւ, իժի՛ւ, * զարդո՛ււ—զարդու (վերջիւ լ-ն ու-ից յետոյ ընկնում է): Սակայն որովհետև լեզուի մէջ չկան այլ ևս * մարդո, * ամա, * իժի, * զարդու բներ, ուստի գրաբարում արդէն իբրև գործիական հոլովի վերջաւորութիւն ըմբռնուել է ոչ թէ վ, և հնչւնքը, այլ ու, աւ, իւ, ու, այսինքն բնի ո, ա, ի ձայնաւորները գործիականի վ, և վերջաւորութեան հետ, կամ հենց բնի ու ձայնաւորը:

Գրաբարի սեռական-տրական հոլովն ունի ձայնաւոր հոլովումների մէջ ի, ու, ալ, ոյ վերջերը: Դրանցից ի, ու ձայնաւորները՝ սրտի՛, զարդո՛ւ, ոչ թէ հոլովակերտ վերջաւորութիւն են, այլ բնի մաս, որ ուղղականում և հայցականում շեշտից յետոյ լինելով՝ գուրս են ընկել, իսկ սեռական-տրականում, ինչպէս և միւս հոլովների մէջ, շեշտը վրան գալով՝ վերականգնում են: Զին հոլովակերտ վերջաւորութիւններն այս հոլովումների սեռականի և տրականի վերջից շեշտի ազդեցութեան տակ գուրս են ընկել, ուստի այս երկու սիլլաբարպէս տարբեր ձևեր ունեցող հոլովը՝ նոյն ձևն են ստացել (քեր. Մէյէի, եր. 48): Եւ որովհետև այլ ևս * սի՛րտի, * զարդու բուն չկայ, ուստի սրտի՛, զարդո՛ւ սեռական-տրականի համար իբրև հոլովակերտ ըմբռնուում են գրաբարում արդէն ի, ու ձայնաւորները:

Ըստ Մատթի (Քեր. եր. 54. հա.) սեռական-տրականի վերջաւորութիւնն սկզբնապէս եղել է րի, որի մնացորդն է յ, որ երևում է, այ, ոյ հոլովումների մէջ՝ Տիգրանայ, քնոյ։ Ըստ Մէյէի սակայն (Քեր. 48) այս յ-ն ո հոլովման մէջ հնդեւրոպական սեռականից է ծագում։ *osyo ձևից առաջացել է ոյ, մինչ նոյն բնի տրականի հնդեւրոպական վերջաւորութիւնը դուրս է բնկել, ուստի և քնոյ սեռականը ուրիշ բնի ձևերի նմանութեամբ գործ է ածուել և իբրեւ տրական։ Ինչպէս էլ լինի այս յ-ի ծագումը, դա միայն գրաբարի համար նշանակութիւն ունի. որովհետեւ աշխարհաբարում այ, ոյ հոլովումները դուրս են բնկել։ Տրդատ, բուն այլ ևս չենք հոլովում Տրդատայ, քնոյ, այլ Տրդատի, բնի։ Եթէ բարբառային կամ գրաբար ձևով այժմ էլ պատահում են Տրդատայ, Արտաշատայ, Վանայ, դրանց վերջի յ-ն այլ ևս չի արտասանւում, թէպէտ և հին գրութիւնը պահում ենք։ Հոլովն այժմ կազմւում է ուրեմն միայն ա ձայնաւորով՝ Տրդատա, Արտաշատա, Վանա. իսկ այս ա-ն, որ այժմ իբրեւ հոլովակերտ ենք ըմբռնում, իսկապէս բառի բունն է։ Գրաբարում սակայն (հին արտասանութեամբ և ոչ այժմեան) իբրեւ հոլովակերտ ըմբռնւում է այ, ոյ (=ay, oy), այոյնքն բնի ա, ո ձայնաւորները սեռական-տրականի յ վերջաւորութեան հետ, ճիշտ ինչպէս գործիականի համար՝ աւ, ով, իւ վերջերը։

Այսպէս ուրեմն չեղուն գրաբարի շրջանում արդէն հորցրած է եղել նախնի հոլովական գրութեան գիտակցութիւնը. երկու տարբեր հոլովներ, սեռականն ու տրականը, նոյն ձևն են ստացել, և ապա բնի ձայնաւորները մենակ կամ յ կիսա-ձայնով՝ ի, ու, ալ, ոյ՝ ըմբռնուել են իբրեւ սեռական-տրականի բնդհանուր հոլովակերտ. որով առաջացել են չորս տեսակ վերջաւորութիւն սեռական-տրականի համար (լնդիւրը ձայնա որ հոլովումների մասին է)։ Նախնի հոլովման ենթադրեալ մշտութիւնն ուրեմն ոչնչացել է շեշտի ազդեցութեան տակ բառերի վերջի դուրս բնկնելովը և առաջ է եկել բազմազանութիւն։ Մի կողմից պաշտօնով տարբեր ձևերը, ինչպէս են սեռականն ու տրականը, որոնք սկզբնապէս տարբեր էլ ձև են ունեցել, ստացել են մի նոր բնդհանուր ձև. միւս կողմից պաշտօնով նոյն հոլովի, այդ միացեալ սեռական-տրականի, ինչպէս և գործիականի համար առաջ են եկել տարբեր տարբեր հրնչականական ձևեր՝ բանի, դարդու, մարդոյ, որոնց մէկը միայն բառական կըլինէր։ «Ամեն լեզու սակայն շարունակ աշխատում է բոլոր անպէտք աննմանութիւնները դուրս ձգելու, պաշտօնով

Նոյնի համար նոյն հնչիւնական արտայայտութիւնն էլ ստեղծելու: Այս ձգտումը մի հակազդեցութիւն (Reaction) է հընչափութեան գործած փոփոխութեան դէմ, որով մի հայովի համար մի քանի ձևեր են առաջ գալիս. լեզուն նոր նմանական կազմութիւններով աշխատում է վերացնել անպէտք և անօգուտ հնչիւնական տարրերութիւնները և վերականգնել նոր ձևական միութիւն, այսինքն մի քանի հոլովումները մի հոլովման վերածել: «Այս հաւասարեցման հետևանքն այն է լինում սովորաբար, որ մի լամբի բառեր անցնում են ուրիշ լամբի մէջ, այն էլ բոլորը կամ միայն մի մասը, կամ բոլոր ձևերի մէջ կամ մի քանիսի մէջ»: ¹ Հոլովումների այս շփոթութիւնն ու փոխանցումը արդէն գրաբարում տեսնում ենք: Այսպէս կան բառեր, որոնց եղակին մի հոլովման տակ է դնում, յոգնակին ուրիշ. կան բառեր ևս, որոնք երկու և աւելի ձևերով են հոլովւում. ինչպէս՝ զօր, զօրու. զօրը, զօրաց, զարդ, զարդու կամ զարդի ևլն: Այս շփոթութեան հետևանքն այն է լինում, որ «հայերէնի զարգացման ընթացքում տարրեր ընդ ձևերը ձգտում են մի տիպի վերածուելու» (Մէյէ, Քեր. եր. 60):

Եւ մենք այսօր տեսնում ենք, որ մեր աշխարհաբարի հոլովումը զբաղարինի դիմաց շատ աւելի հաստատուն և պարզ կերպարանք ունի: Գործիականի նոր կազմուած ով վերջաւորութիւնը, որ բազադուած է ու ընկը և հին հոլովակերտ վ վերջաւորութիւնից, միակերպ աւելանում է բոլոր բառերի վրայ. ինչպէս մարդով, քնով, այսպէս և սրտով, զարգով, ազգով, հօրով, աստղով ևլն: ² Նոյն կերպ ընդ ի ձայնաւորը իբրև սեռական—տրականի հոլովակերտ բժրոշուելով՝ ընդհանրացել և ուրիշ բուն ունեցող բառերի համար, մինչև որ աշխարհաբարում իշխող ձևն է դարձել. ինչպէս սիրա, սրտի է հոլովւում, այսպէս և դրա նմանութեամբ զործի, զարդի, լուութիւնի, աստղի:

Գրաբարում արդէն այս հոլովական փոխանցումը զօրեղ կերպով երևում է. ա բուն ունեցող հասարակ անունները, որոնք բացառայնով են վերջանում, սեռական—տրականի մէջ չուռ են եկել ի հոլովման. ինչպէս աշխարհ, մար փոխանակ * աշխարհայ, * մարայ ձևերի ունին արդէն աշխարհի, մարի: Յատուկ անունները միայն դեռ պահում են այ ձևը՝ Տրդատայ,

1. H. Paul, Princ. der Sprachgeschichte, եր. 161. 185 հան.

2. Կան յարբանիք, որոնց մէջ գործիականի աւ փերջաւորութիւնն է ընդհանրացած:

Տիգրանայ։ Աշխարհաբարում սակայն ոչ միայն յատուկ անունները, այլ և կարելի է ասել, բոլոր ուրիշ բուն ունեցող բառերը, շուռ են եկել ի հոլովման։ յոգնակի սեռական-տրականը միակերպ ի ձայնաւորով է կաղմուտ, իսկ եղակիւթում, եթէ սակաւաթիւ բառեր ուրիշ կերպ են հոլովուում, բարբառներին մէջ դրանք էլ ունին ի հոլովման ձևեր։

Կան բարբառներ սակայն, որոնց մէջ շատ արածուած է ու հոլովումը ոչ միայն ու բունն ունեցող բառերի համար, այլ և ուրիշ բուն ունեցող բառերի վրայ անցել է ու վերջաւորութիւնը Արեւելեան աշխարհաբարի մէջ ևս որոշ բառեր հոլովուում ու վերջաւորութեամբ։ Այս վերջաւորութիւնը սակայն մեծ մասամբ բառերի բնի ու ձայնաւորը չէ, որ մնում է մեր աշխարհաբարում։ որովհետեւ այդ բունն ունեցող բառերը սակաւ բացառութեամբ արդէն շուռ են եկել ի հոլովման, ինչպէս՝ դորդ, զգեստ, հորթ (որթ) ևւն։ հոլովում են զարդի, զգեստի, հորթի և ոչ թէ զարդու, զգեստու, հորթու։ Աշխարհաբարի ու հոլովակերպը ծագում է մեծ մասամբ դրաբարի ոյ հոլովումից ձայնաշրջութեամբ։ ինչպէս լոյս, քոյր, հաւաքածոյ, շինածոյ, քոյ, խաշոյ դարձել են՝ լուս, քուր, հաւաքածու, շինծու, քու, խաշու, այսպէս և անորոշ դերբայների և սակաւաթիւ ուրիշ բառերի սեռական-տրականը՝ գնալոյ, ասելոյ, Աստուծոյ, մարդոյ, սիրոյ, ձիոյ եղել են՝ գնալու, ասելու, Աստուծու, մարդու, սիրու, ձիու։ Նոյնպէս գինւոյ, որդւոյ և նմանները գինոյ, որդոյ ձևերից անցնելով՝ դարձել են գինու, որդու։ Կան բարբառներ սակայն, որոնց մէջ այս բառերն ևս վեր են ածուել ի հոլովման՝ գնալի, ասելի, մարդի (նոյնպէս գրական լեզուի մէջ), սէրի, ձիի, գինիի ևւն։ Բայց գրական լեզուի մէջ դրանց համար պահուում է սովորաբար ու ձևը։

Այսպէս ուրեմն ու հոլովակերպը կամ բառերի բունն է հոլովակերպ դարձած, կամ ձայնաշրջութեամբ նոր ծագած է ոյ երկբարբառից։ Նոյնպէս բառերի բունն է և ա հոլովակերպը, ինչպէս տեսանք, Տրդատա, Վանա-Տրդատայ, Վանայ ձևերի մէջ։ Տեսնենք ան, ւան հոլովակերպները։

Ն բունն ունեցող անունները կորցնելով բունը՝ մասամբ արդէն շուռ են եկել ի հոլովման՝ մասի, ոտի, ձեռի, կաթի, ակի, արեգակի, որդի, սերմի ևւն։ մասամբ ևս սեռական-տրականը կաղմում են ան վերջաւորութեամբ։ գառ, գառան, եղ, եղան. դուռ, դռան. մուկ, մկան։ Այս ան ձևը սակայն սկզբնապէս ոչ թէ հոլովական վերջաւորութիւն է, այլ բուն, որ դրաբարում սեռական-տրականի մէջ վերականգնում է շեշտը

վրան առնելով, ինչպէս՝ շարժումն, շարժման. հոլովական վերջաւորութիւնը դուրս է ընկել քստ Մասի (Քեր. 76): Բայց աշխարհաբարում, քանի որ այս կարգի բառերի ն վերջը ուղղականութիւն դուրս է ընկել, սեռական-տրականի ան ձևն ըմբռնւում է արդէն իբրեւ հոլովակերտ վերջաւորութիւն: Այսպէս և գրաբարում արդէն առանց ն-ի լինում են՝ աղջիկ, աղջկան, մանուկ, մանկան. հանգիտ, հանգստեան. ժողովուրդ, ժողովրդեան ևլն, որոնց մէջ ան, եան ըմբռնւում են իբրեւ հոլովակերտ:

Ինչ ծագում ունի ևան վերջաւորութիւնը, որով կազմւում է ժամանակի անունների սեռական-տրականը:

Մասը գրաբարի հոլովման որոշ դժուարութիւններ բացատրելու համար «դետերմինատիւ» անունան առի զնում է մի վերջածանց մասնիկ ման, որի ընտարութիւնն ու նշանակութիւնը սակայն չի կարողանում որոշել: Այդ մասնիկն իբր վեց ձևով է ներկայանում՝ ման, մա, մո, ւան, ւա, ւո. (Մառ, Քեր. եր. 61 հան): Սակայն բացի բառակազմութիւնից՝ այդ մասնիկը, ինչ որ հոլովման կազմութեանն է վերաբերում, շատ երկբայելի է: Գրա ևան, ւա ձևերը, որ իբրեւ թէ երևում են աշխարհաբարի ժամանակի անունների հոլովման մէջ, ոչ թէ ենթադրած ման «դետերմինատիւ» ասորեր ձևերը պէտք է համարել, այլ գրաբարի եան, եայ ածանցների ձայնաշրջութեամբ ձևեր:

Գրաբարում ժամանակի անուններից մի քանիսը՝ բացի սովորական ձայնաւոր հոլովումներից, — ամիս, ամոյ. ժամանակ, ժամանակի. շաբաթ, շաբաթու. վաղիւ, վաղուի. դար, դարու ևլն. — ունին նաեւ եան վերջաւորութեամբ սեռական-տրական՝ ամսեան, ամսենէ. ժամանակեան, շաբաթեան, վաղուեան, վաղուենէ, դարեան, երեկորեան կամ երեկորեայ յերեկորեայ. — Այս բառերի համար եան բուն ընդունել կարելի չէ. զրանց եան ձևով սեռական-տրականը պարզապէս նմանական (անալոգիական) կազմութեամբ առաջ եկած պէտք է համարել: Ինչպէս որ ի բնի բառերի ի ձայնաւորն իբրեւ սեռական-տրականի հոլովակերտ ըմբռնուած՝ անցել է և ուրիշ բառերի վրայ, նոյնպէս և մի շարք անունների սեռական-տրականի մէջ երեւած եան բունը, — գեղարգն, գեղարգեան. ինքն, ինքեան. այլ և հանգիտ, հանգստեան. լիախուտ, լիախրտեան ևլն, — իբրեւ հոլովակերտ ըմբռնուած՝ անցել է և ուրիշ անունների, ի միջի այլոց և ժամանակի անուններին. և այսպիսով կազմուել են ժամանակեան, շաբաթեան ևլն սեռական-տրականները:

Բառի վերջում և հնչիւնի տեղ անցնում է և յ (Մատ. եր. 29), և այս վերջաւորութիւնը երկու ձևով՝ եան—եայ շատ դործածական է սեռական-ածականներ կազմելու համար.

1. Ժամանակի անուններից, ինչպէս՝ ժամանակեան, ժամանակեայ. առաւօտեան, առաւօտեայ. չորեքամսեան, չորեքամսեայ. գիշերեան, միօրեայ, չորեքժամեան ևլն:

2. Հայրանուն, ազգանուն. ծաղում, տեղացի ևլն ցոյց տալու համար, ինչպէս՝ հայկազնեան, հայկազնեայ. մամիկոնեան, մամիկոնեայ. արեւելեան, արեւելեայ. աստուածեան, Արայեան, — արամեան, արամեայ, գեղամեայ, պղատոնեայ, կեսարեայ, Թորգոմեայ ևլն: Վերջին ձևերը դործ են ածւում և իբրև սեռական-արական:

Այս եան վերջաւորութիւնը եւս երկրարժանի սովորական ձայնաշարութեամբ՝ դառնում է ան կամ են. իսկ եայ ձևը դառնում այ. ա (վերջին յն ևս չի արտասանւում), կամ եյ—է: Օրինակ՝ վերջին ձևի համար՝ միջերկրեայ—միջերկրայ, միջօրեայ, միջօրեյ—միջօրէ, քրիստոնեայ, քրիստոնէ: Ջրօրհնեայ—ք, ջրօրհնէ—ք, իսկ ջրօրհնեան—ք—ջրօրհնէք. ինչպէս՝ Ղևոնդեան—ք, Ղևոնդէն—ք. Վարդանեանք, Վարդոնէնք, Վարդանանք: — Այսպէս և ժամանակի անունների մէջ նոյն եան վերջաւորութիւնը դառնում է են՝ ամսեան, ամսեն. շաբաթեան, շաբաթեն ևլն: Օրինակ՝ յամսեանն մի անգամ—ամսենք մի անգամ. ի շաբաթեան մի անգամ—շաբ(ա)թենք մի անգամ. այսպէս և օրենք մի անգամ, տարենք մի անգամ: Ամսեն, շաբթեն, տարեն, օրեն այս դէպքում ներգոյականի իմաստով տրական հոլովներ են, գրաբարում ի(յ) նախդրով, որոնց լիովնակ դործ են ածւում նոյն իմաստով և տարին մի անգամ, ամիսը միանգամ—ի տարին մի անգամ, յամիսն մի անգամ: Նոյն ձայնաշարութիւնը եան վերջաւորութիւնը պահում է և իբրև սեռական-ածական դործածուած ժամանակ. չորսամսեան, հինգշաբաթեան դառնում են չորս ամսեն, հինգ շաբաթեն. այսպէս և երկ' օրեն, երեք օրեն, վեց ամսեն¹. (վեց ամսեն հարս—վեց ամսան հարս երեք օրեն դործ—երեք օրան դործ ևլն:)

Այս եան—եայ վերջաւորութիւնը ժամանակի անունների

1. Այժմ գրում ենք՝ օրէն, ամսէն, տարէն, շաբթէն, իսկայէս պէտք է գրել ե-ով, օրեն, ամսեն, շաբթեն, տարեն (մի անգամ. բան ելին), բանի որ եւս երկրարժան մնացած գէպերում և է գառնում եւ ոչ՝ ե. ինչպէս Տիգրանեանք, իրեանք, լիարդ, տեսեալ ելին, ելին, լինում են՝ Տիգրանենք, իրենք, լերդ, տեսել:

մէջ սակայն, անշուշտ որեւէ բարբառում ծագած և տարածուած, մի ուրիշ ձայնաշարջութեամբ դառնում է լան—ւայ—ւա։ Օրինակ՝ չորսամեան դառնում ոչ միայն չորս ամսեն, այլ և չորս ամսան։ Իսկ չորսամեայ լինում է չորս ամսւայ—չորս ամուայ Այսպէս և ժամանակեան, շաբաթեան, վաղուեան, դարեան սեռական-տրականները դառնում են՝ ժամանակւան, ժամանակւայ, շաբաթւան, շաբաթւայ։ Վաղւան, վաղւայ։ Խաււան, Խաււայ։ Նոյն ձևով և միւս սեռական տականները լինում են՝ առաւօտեան, առաւօտեայ—առաւօտւան, առաւօտւայ։ գիշերեան—գիշերւան, գիշերւայ։ երեկեան երեկւան, երեկւայ։ —ժամեան—ժամւան, ժամւայ։ —օրեան, —օրւան, օրւայ և չին։ Այս լան—ւայ վերջաւորութիւնն ապա ընդհանրացել է ժամանակի անունները շատերը վրայ և նոյն իսկ ամառ, ձմեռ, գարունք, աշունք, մայիս և ուրիշներն ունին սեռական-տրական տմառւան, ձմեռւան գարունքւան, մայիսւան (մայիսեան)։

Նման ձայնաշարջութիւն տեսնում ենք և գրաբարի յոդանակի եան(է) տօնցի համար, որ բարբառներում ոչ միայն ան(է) ձևն է տառնում, այլ և ան(է)։ Ընչպէս՝ իշեան լինում է ոչ միայն իշան, այլ և իշւանք։ Նոյնպէս՝ հաղորանք, տեղւանք և չին։

Այս եան—ւան ձայնաշարջութիւնը կարելի է բացատրել ընդունելով, որ եա—ea երկբարբառն արտասանուել է նախ կիսաձայն յ-ով իբրեւ յա ya, ընչպէս այժմ արտասանում ենք։ ապա կիսաձայն յ-ի տեղ անցել է ւ, մի ձայնաշարջութիւն, որ բացի վերևում յիշածներից՝ երևում է և ուրիշ գէպերում։

Նոյն անուանական եան եայ հոլովակերտով, ընչպէս վերևում բացատրեցինք (Մարտ. 289 հան), հազմուած ենք հա-

1. Գրաբարում արդէն պատահում են արանաւ, օրորդ, բարոր հիւն. գրութիւններ փոխանակ արիանաւ, օրիորդ, բարիոր մեկերի։ Գրանք պատահական սխալներ չեն։ այլ արտասանութեան վրայ հիմնուած գրութիւններ։ Այսպէս եւ մի քանի անունների վերջի ի—ն՝ հոլովակերտ ձայնաւորից առաջ կիսաձայն յ արտասանուելով չբջւում է ւ-ի։ Անի, Անւայ, Շուշի, Շուշւայ, Լօսի, Լօսւայ, Կաշի, Կաշւի, Օսմանցի, Օսմանցւի (Տե՛ս Պօօշ, Ակ. երկ. եւ. 509. 510. 555. 550 հիւն), Կիսաձայն յ եւ ւ հնչիւնների փոխանակութիւնն երևում է ի միջի այլոց եւ հետեւեաների մէջ՝ Հայոց, հաւոց, արքայութիւն, արքաութիւն հիւն, երկրորդները բարբառային արտասանութիւններ են, նոյնպէս օտարազգի անունների մէջ՝ Մենիւայոս, Մենիւաոս հիւն։

Այս ձայնաշարջութիւնն աւելի պարզ կերպով երևում է գրաբար-

մարում և իւրեան սեռական-տրականը, որի մի ուրիշ ձևն է *իւրեայ, որ եա=ա ձայնաշրջութեամբ՝ *իւրայ ձևով երևում է իւրայոց, իւրայովք ևւն. հոլովների մէջ: Իսկ աշխարհաբարում սովորական ձայնաշրջութեամբ դառնում է իրեն կամ իրան. և վերջինս իւրայ=իրա: Ուստի իւրեան դերանունն ձևերը պէտք է ոչ թէ կէս անունական, կէս դերանունական հոլովում գնել, ինչպէս Մառը (եր. 148, 151), այլ ամբողջապէս անուանական հոլովման տակ: Իւրեան և *իւրեայ (և ոչ *իւրեա) ձևերը կազմուած են պատրաստի իւր ձևի վրայ աւելանալով

բում ի վերջոցած՝ բազմաթիւ հոլովման մէջ. ինչպէս այլազգիքուն՝ *այլազգիա, գործիական ունի այլազգեսա=այլազգիսւ. յոգն. սեռական-տրական՝ *այլազգիաց= *այլազգիաց. իսկ եզակի սեռ. տր. այլազգւոյ= *այլազգիոյ. Մի դէպքում ի ձայնաւորը յաջորդ ա ձայնաւորի հետ կազմում է եա=ea երկարբառ, որ այժմ արտասանում է իրրեւ յա=ya. իսկ միւս դէպքում նոյն ի ձայնաւորը ո ձայնաւորից առաջ յ կիսաձայնից անցնելով դառնում է լ. Մառն (եր. 70) այս կարգի բառերի հոլովումը բացատրելու համար ընդունում է լո «դեպերմինատիւ» մասնիկ եւ զոյգ բուն *եկեղեցեա *եկեղեցիւ: Բայց այդ երկբայելի է. Այստեղ միայն հոլովման շեղում կայ. այդ բառերի բունն է ա. եւ եզակի սեռական-տրականում շուռ են գալիս ո բնի հոլովման. Ինչպէս նոյն ա բնի հասարակ անունները, երբ բազմաթիւ են վերջանում, շուռ են եկել ի հոլովման, աշխարհի փոխանակ *աշխարհայ ձեւի. —նոյնպէս այլազգւ = *այլազգիոյ ձեւը հոլովման շեղում է լոկ փոխանակ *այլազգեայ= *այլազգիայ ձեւի: Այստեղ եւս յատուկ անունները ղեռ պահում են ա բունը՝ Տիգրանուհեայ=Տիգրանուհիայ, Թէ այստեղ լոկ հոլովման շեղում եւ ձայնաշրջութիւն կայ, այդ շատ պարզ երեւում է նոյն տեսակի օտարազգի անունների մէջ. Նիկիա, (Նիկեա) Ասիա, Սամարիա, Կեսարիա, Մակեդոնիա սեռական-տրականի մէջ կամ իրրեւ յատուկ անուն ղեռ պահում են ա բունը, ստանալով միայն հոլովակերտ վերջաւորութիւնը՝ Նիկիայ, Ասիայ, Ասիաւ, Սամարիայ (ի-ն է դառնալով) Սամարեայ, Կեսարիայ, Կեսարեայ, Մակեդոնիայ, Մակեդոնեայ, Մակեդոնեաւ, —կամ Թէ, ինչպէս հասարակ անունները՝ ա բունը ո բնի շուռ գալով ունին՝ Նիկիոյ, Ասիոյ, Կեսարիոյ, Սամարիոյ, Մակեդոնիոյ. եւ ապա ո-ից առաջ ի=լ ձայնաշրջութեամբ՝ Սամարւոյ, Մակեդոնւոյ եւլին, Նոյնպէս եւ եկեղեցի, բուն միայն *եկեղեցիա (=ἐκκλησία), յոգնականում եւ եզակի գործիականում պահում է ա բունը, որից առաջ ի-ն է դառնում, եկեղեցեաց, եկեղեցեաւ= *եկեղեցիաց, *եկեղեցիաւ. իսկ եզակի սեռական-տրականի մէջ շուռ է գալիս ո բնի հոլովման եւ ո ից առաջ ի-ն լ է դառնում. եկեղեցւոյ= *եկեղեցիոյ, փոխանակ *եկեղեցեայ= *եկեղեցիայ ձեւի.

եան—եայ անուանական վերջաւորութիւնը: Այսպէս և *նոր ձեւից եան, եայ—ան, այ վերջաւորութեամբ կազմուած է նորան, նորայ իբրեւ կրկին հոլովուած սեռական—տրական, ինչպէս և ռւմ ձեւից կրկին հոլովուած սեռական—տրական լինում է ռւմին: 1

Գրաբարում այս եան=եայ վերջաւորութեամբ կազմուած ձեւերը, իբրեւ սեռական ածականներ, ինչպէս սպասելի էր, սովորաբար անփոփոխ են մնում. բայց կարող են իբրեւ սեռականից ուղղական դարձած ձեւեր՝ հոլովուել ևս: Հոլովուելիս դրանք իբրեւ նոր բուն կամ պէտք է անմիջապէս հոլովական վերջաւորութիւնները ստանային, կամ թէ որեւէ ձայնաւոր հոլովման տակ դնային: Այսպէս էլ լինում է: Մամիկոնեան հոլովում է ի կամ ոյ հոլովման ձեով՝ Մամիկոնենի, Մամիկոնենոյ. բայց յոգնակին լինում է և

Մամիկոնեանք	իւրեանք
Մամիկոնեանց	իւրեանց
Մամիկոնեամբք	իւրեամբք

նոյնպէս՝

1. Այն ին վերջաւորութիւնը որ նոյն եան մասնիկէ մի ուրիշ ձեւը պէտք է համարել. երեւում է եւ իմին, մերին, ձերին, քուկին (=քոյին) ստացականների մէջ փոխանակ *իման, *մերեան, *ձերեան ձեւերի: Յ.ով մեւերը, *իմայ, *մերայ, *ձերայ=իմայ, *մերեայ, *ձերեայ երեւում են իմայոյ, իմայով, մերայոց, ձերայոց եւլն հոլովների մէջ: ինչպէս *իւրայ=իւրեայ ձեւը՝ իւրայոյ, իւրայով եւլն: Աւանդից բացառականը ենթադրել է տալիս *ուման=ումեան ձեւ, որից եւ ումին: Այսպէս եւ Աստուածանից բացառականը կազմուած *Աստուածան=Աստուածեան ձեւից:—եա(ն)=ի(ն) ձայնաշարքութիւնն երեւում է եւ ուրիշ դէպքերում բարբառների մէջ. պարարից յիշենք միայն առաւօտեան, առաւօտին, երեկորեան, երեկորին.—Ամենեքեան, երկորեան, երեքեան եւլն եւ ամենեքին, երկորին, երեքին ձեւերն եւս, կարծում ենք, մի եւ նոյն հաւարական եան ածանցի տարրեր բարբառային ձեւերն են լուկ եւ իրարուց բաժանել կարելի չէ, մէկը գնելով դերանուանական եւս միւսն՝ ի հոլովումների տակ, ինչպէս անում է Մառը (եր. 146, 148 հտ.), երկոր, երեք, չորեք, հնգեք ձեւերի վրայ աւելանալով եան=ին կազմում են երկորեան, երկորին, երեքեան, երեքին, չորեքեան, չորեքին, հնգեքեան, հնգեքին: Վերջիններիս նմանութեամբ կազմուած են եւ ամենեքեան, ամենեքին, բոլորեքեան, բոլորեքին եւլն: Բոլորովին ձեւն եւս ոչ թէ դերանուանական ի հոլովման, այլ անուանական ո հոլովման գործիական է՝ բոլորո ընդ, ինչպէս զլսովին, քնովին եւ շատ նմաններ:

Վարդանանք նորանք, իրանք
 Վարդանանց նորանց, իրանց
 Իսկ եւայ ձեռ հոլովում է աշպէս

Արեւելեայք նորայք *իւրեայ

Արեւելեայց նորայց

Արեւելեաւք իւրեաւ

Կամ թէ՛

Արեւելից =

*Արեւելայից նորայից *իւրայից

Արեւելիք =

*Արեւելայիւք նորայիւք իւրայիւք

Դերանուններն ազգուիւով իմ, մեր, ձեր և ին ստացական
 ներքից՝ հոլովում են և ոյ ձեռով նորայոց, նորայովք, իւրայոց,
 իւրայովք։ Արանց եղակին մեզ ի ձեռով չի պատահած, քայց
 քանի որ կայ յոգնակին նորայից, նորայիւք, իւրայիւք պէտք է
 ընդունել և եղակի ձեւեր՝ նորայի, նորայիւ, իւրայիւ ինչպէս՝
 մամիկոնեայ, մամիկոնէի, մամիկոնէիւ, չորեքօրեայ, չորեքօրէի,
 չորեքօրէիւ։ Եւ ինչպէս որ Մամիկոնեան ունի և Մամիկոնենի,
 նոյնպէս և իրան (իրեն) հոլովում է աշխարհաբարում իրանի
 (իրենի) և ին։

Այսպէս ուրեմն եանեայ վերջը մի անգամ իբրեւ հոլո-
 վակերտ ըմբռնուած աւելացել է ոչ միայն անուններէ, այլ և
 դերանուններէ վրայ, որոնք իրենց կազմութեամբ և հոլովներով
 չեն տարբերուում նոյն կարգի անուններից։ Յոգնակի իւրեանք,
 իւրեանց, նորանք, նորանց, ձեւերը սկզբնապէս անպայման ստա-
 ցական նշանակութեամբ են գործածուած (գրաբարում ոոյն
 իմաստով սրատահում են նորայնք, նորայնց) և ապա ստացած
 ինքեանք, ինքեանց, նոքա, նոցա քառերի իմաստ իսկ եղակին՝
 նորան, նորայ, իւրեան, *իւրեայ թէ իբրեւ սեռական-տրական,
 և թէ իբրեւ սեռական ածական այսինքն ստացական. ինչպէս
 նոյնը գտնում ենք և նոյն կազմութեան անունների համար՝
 օրինակ՝ ժամանակեան, ժամանակեայ, — որ իբրեւ սեռական
 ածական հոլովում է ժամանակեանք, ժամանակէի, ժամանա-
 կէից, ժամանակէիւ, ժամանակէիւք, կամ ժամանակեայք, ժա-
 մանակեայց, — գործ է ածուում և իբրեւ սեռական — տրական.
 Յետոսկաւ միոյ ժամանակեան. ի փոքր ժամանակեան ։

1, Այս սեռական-տրական անունական հոլովակերտը գրաբար-
 ում ան, այ մեռով աւելանում է ոչ միայն սեռականի, այլ և տրա-
 կանի վրայ. այսպէս հին *նում տրականից կազմուած են նմայ, *նման.

Վերևում քաղատրածներն են, որ աշխարհա-
բարի սեռական-տրական վերջաւորութիւնները՝ ի, ու, ա
(=այ), ան,ւան, սկզբնապէս ոչ թէ հոլովական վերջաւորու-
թիւն են եղել սեռականի համար տրականի, այլ ընդ մաս (ու
վերջաւորութիւնը նաև ձայնաշրջութեամբ առաջացած), որ
ապա իբրև վերջաւորութիւն են ըմբռնուել: Իրանք հայերէ-
նում կազմուած հոլովակերտներ են և կազմուած են այն ժա-
մանակ, երբ հին սեռական և տրական հոլովները անունները
մէջ նոյնացած են եղել՝ համար հնչափոխութեամբ համար անուղ-
ղիական կազմութեամբ նոյն ձևն ստացած լինելով: Հետևաբար
աշխարհաբարի այս հոլովակերտ վերջաւորութիւնները առաջ
են եկել ոչ լոկ իբրև սեռականի, համար լոկ իբրև տրականի վեր-
ջաւորութիւն, այլ իբրև մի ընդհանուր վերջաւորութիւն այդ
երկու հոլովի համար: Ստուգաբանորէն ուրեմն դրանք նոյնչափ
տրականի վերջաւորութիւն են, որչափ և սեռականի: Իսկա-
պէս ոչ այս են, ոչ այն, այլ նոր ընդհանուր ձևեր: Ուստի և
ստուգաբանական ոչ մի արգելք չկայ ի, ու, ա, ան,ւան վեր-
ջաւորութիւններով կազմուած Զ-ը հոլովական ձևերը, դրանց
հետ և նորան, նորա իրան իրա մի ընդհանուր հոլովական ձև
համարելու:

Նոյնը կարելի է ասել և ոչ, ց վերջաւորութիւններով, ինչ-
պէս և առանց վերջաւորութեան կազմուած սեռական տրականի
համար. ց և ոչ վերջաւորութիւնները, որոնց ծագումը չի բա-
ցատրուած, դրաբարում թէ սեռականի և թէ տրականի մի
ընդհանուր ձև են կազմում (միոջ, կնոջ, տեղւոջ). և այդ իմաս-
տով էլ դրանք անցել են աշխարհաբարին: Այսպէս հոլովում
են սակաւաթիւ բառեր:

որից նմանէ. այնմ տրականից այնմն—*այնման. որից—* այնմանէ. Իսկ
*նոց, այնց ձեւից նոցայ, *նոցան. *այնցան. որոնցից նոցանէ. այնցանէ.
*նով, *նովք գործիականի վրայ. ինչպէս սպասելի էր, աւելանում է աւ,
աւք. նով.աւ, *նովք-աւք=նորաւք:—Այս բոլորը կրկին հոլովուած ձեւեր
են, որոնք յետ են մղել հին նոր, նում, նով.-նոց, նովք ձեւերը: Յոգնա-
կանի նորայ, նոսայ ձեւերը պէտք է կարծել է սրանց նմանութեամբ ևն
կազմուած *նոր, *նոս ձեւերից, կրկին հոլովուած ձեւ է եւ այստեղիւ, որ
ծագում է ոչ թէ այսովքիւրք ձեւից, այլ այսովքիւրք—այսովքիւրք—այ-
սովքիւրք ձեւից. այսինքն յոգնակի գործիականի վրայ աւելացել է եւաւք
վերջաւորութիւնը: Իսկ այսորիկ, այսմիկ, այսուիկ եււն ձեւերի վերջում
պարզապէս իկ ածանցն է, որ բարբառների մէջ երեւում է եւ ուղղա-
կանում է իիկ, էդիկ, էնիկ—այսիկ, այդիկ այնիկ:

Առանց վեջաւորութեան սեռական-տրական ունին հայր, մայր, եղբայր—հօր, մօր, եղբօր, շուն, առն—չան, տան. սին, ձին—սեան, ձեան (թողովրդական ձեով՝ սան, ձան), այլ և դրաբարից փոխառութեամբ արիւն, արեան. անկիւն, անկեան, և—ութիւն ածանցով կազմուածները՝ սրբութիւն, սրբութեան: Այս բառերը սեռական-տրականի մէջ պահում են ընդ ե, ն հնչիւնները և հոլովում են առանց որեւէ հոլովական վերջաւորութեան միայն միջի ձայնաւորների փոփոխութեամբ: Այս ձեւերն ևս դրաբարում ինչպէս սեռական, նոյնպէս և տրական են իսկապէս մի ընդհանուր ձև, և այս իմաստով ևս անցել են աշխարհաբարին: Դրանք հին հոլովման մնացորդներ են, որոնք մասամբ արդէն ի հոլովման են անցել՝ արիւնի, անկիւնի, ձինի, սինի, սրբութիւնի. իսկ միւսները՝ շունի, առնի գաւառական են: Թողովրդի մարդոց բերանին պատահում են նոյն իսկ՝ հայրի մայրի ձևեր:

Մեր հետևութիւնը պարզ է: Քանի որ մեր սեռական և տրական հոլովները ձևով բոլորին նոյն են և մի ընդհանուր հոլով են կազմում ըստ ձևի, և սեռականը այդ մի ընդհանուր հոլովի մի գործածութիւնն է իբրև անուան վերադիր, մեծ մասամբ այն իմաստներով, որ ունի տրականը, իսկ տրականը նոյն հոլովական ձևի գործածութիւնն է իբրև խնդիր բայի, ածականի և նախադրութեան, —գործածութիւններ, որ ունին և միւս հոլովները,—ապա և այդ երկու հոլովը մի միակ հոլով էլ պէտք է զննել ձևաբանութեան մէջ: Եւ այդ մի հոլովը վերևում բացատրած հիմունքներով յարմար է անուանել տրական:

Մեր ընդհանուր հետևութիւնը հետևեալն է,

1. Պէտք է որոշ կերպով տարբերել իրարուց հոլով ըստ ձևի և հոլով ըստ նշանակութեան կամ կիրառութեան միայն:

2. Մեր աշխարհաբար լեզուն ըստ ձևի (formell) միայն հինգ հոլով է զանազանում, ուստի ձևաբանութեան մէջ (formenlehre) միայն հինգ հոլով պիտի գնել:

3. Ինչպէս կոչականը, նոյնպէս և հայցականն ու սեռականը միայն ըստ նշանակութեան կարելի է հոլով համարել. ուստի դրանց ուսումը պէտք մանի շարահիւսութեան մէջ:

Սեռական հոլովը պիտի պահել 2-րդ հոլովի իբրև անուան լրացում կամ վերադիր գործածութեան համար, ինչպէս և Հայցական տերմինը ոչ թէ ձևի համար պիտի գործածել, այլ

ուղղականի և արականի հոլովական ձևերի իբրև անցողական քայերի սեռի խնդիր գործածածութեան համար: Այսպէս վար-
ւում են արդէն մեր քերականները կոչական հոլովի համար, որ
ըստ ձևի առանձին չեն դնում:

Որքան էլ դժուարանան մեր վարժապետները հոլովական
ձևերը ստորեկնելու ժամանակ՝ սեռական, հայցական և կոչա-
կան հոլովները դուրս ձգած տեսնել հոլովոնների շարքերից, պէտք
է վարժուեն դրան, եթէ չեն ուղում հոլով ըստ ձևի և հոլով
ըստ նշանակու թեան, ձև և ձևի կիրառութիւն խառնել իրար.
եթէ չեն ուղում ձևաբանութեան ժամանակ ապարդիւն տանջել
երեխաներին: Ամեն լեզու ունի իւր որոշ յորինուածքը և այդ յո-
րինուածքի համեմատ պիտի լինի քերականութիւնը. դրա հակա-
ռակ վարուողը իւր աշակերտների գլխում միայն խառնափրն-
թորութիւն կը ծնեցնի և ոչ պայծառ հասկացողութիւն լեզուի
կազմութեան մասին:

Մ. Արեղեան.

Վերջ: